Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (16 դասաժամ), տեխնոլոգիայի ուսուցչի (տղաներ) (8 դասաժամ), երաժշտության ուսուցչի (12 դասաժամ) թափուր տեղերի համար:

Նշված պաշտոնների համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. *Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),*

2. *Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26 -րդ հոդվածի 1 -ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,*

3. *Անձնագրի պատճենը,*

4. *Ինքնակենսագրություն (Ձեւ 4),*

5. *Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),*

6. *Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,*

7. *Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,*

8. *ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:*

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ հունվարի 12-ից մինչև հունվարի 25 ներառյալ, ամեն օր՝ ժամը10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա, 2022թ. փետրվարի 1-ին՝ ժամը 15:00, ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցում.

հասցե՝ ք. Քաջարան, Աբովյան 12:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285)-3-21-23, կամ (094)00-28-11 հեռախոսահամարներով: